

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

..... 2015 թվականի N-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
5-Ի N 1370-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 31-ի N 1904-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1916-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1370-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված պատվիրատուները, ներառյալ քաղաքային համայնքների կառավարչական հիմնարկները, բացառությամբ գյուղական համայնքների, ինչպես նաև քաղաքային և գյուղական համայնքների հիմնարկների, օրենքով սահմանված շրջանակային համաձայնագրերի միջոցով, ինչպես նաև բաց, պարզեցված և օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված ընթացակարգերով գնումները իրականացնում են սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱԼՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1.	Անհրաժեշտությունը
	Սույն որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով իրականացվող գնումների շրջանակը ընդլայնելու անհրաժեշտությամբ:
2.	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	<p>2014թ. հունվարի 1-ից ՀՀ հանրապետական գործադիր մարմիններն ու տարածքային կառավարման մարմիններն և պետական հիմնարկները <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված բաց և շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգերը իրականացնում են բացառապես էլեկտրոնային գնումների Armeps (այսուհետ՝ Համակարգ) համակարգով:</p> <p>ՀՀ կառավարության 25.12.14թ. թիվ 1493-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 05.12.13թ. թիվ 1370-Ն որոշման մեջ, որով նախատեսվել է, որ 2015 թվականի ապրիլի 1-ից պետական մարմինների կարիքների համար նաև պարզեցված ընթացակարգով, իսկ քաղաքային համայնքների կարիքների համար բաց ու պարզեցված ընթացակարգերով և շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումները պետք է իրականացվեն էլեկտրոնային ձևով:</p> <p>ՀՀ կառավարության 30.01.15թ. թիվ 105-Ն որոշման փոխվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված ընթացակարգի կիրարկման կարգը, որը հնարավորություն է տալիս վերոհիշյալ պատվիրատուների կողմից այս ընթացակարգը նույնպես իրականացնել էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:</p> <p>Հիմք ընդունելով վերոգրյալը, անհրաժեշտություն է առաջացել մշակել ՀՀ կառավարության որոշման սույն նախագիծը:</p>
	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը
	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականության փոփոխություն չի նապատեսվում:
4.	Կարգավորման նպատակը և բնույթը
	Որոշման նախագծի նպատակն է ընդլայնել էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով իրականացվող գնումների շրջանակը:
5.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	Որոշման նախագիծը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության կողմից:
6.	Ակնկալվող արդյունքը
	Որոշման նախագծի ընդունմամբ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով կիրականացվեն նաև ՀՀ հանրապետական գործադիր մարմինների ու տարածքային կառավարման մարմինների և պետական հիմնարկների, ինչպես նաև ՀՀ քաղաքային համայնքների կողմից Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված ընթացակարգը, ինչը կնվազեցնի ինչպես թղթատարությունը, այնպես էլ կոռուպցիոն ռիսկերը:
7.	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի նախագծերը կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ՝ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՑԱՆԿ

այն իրավական ակտերի, որոնց հիման վրա կամ որոնցից օգտվելով մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը

- «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք,
- «Գնումների մասին» ՀՀ օրենք,